2. ԹԱՌ

Տարածված է Իրանում, Հարավային Կովկասում և Միջին Ասիայում: Քաղաքային երաժշտական կենցաղի այն նվագարանն է, որի ճակատագրի մեջ հայերի ներդրումը չափազանց մեծ է: Արևելյան երաժշտության պատմությանը հայտնի են հայազգի փայլուն թառահարների անուններ՝ Աղամալ Մելիք-Աղամալյան, Բալա Մելիքյան և ուրիշներ: Հայ երաժիշտները մեծ դեր ունեն Մերձավոր Արևելքում թառի կատարողական արվեստի զարգացման ասպարեզում:

Թառն ունի երկխոռոչ ութաձև արձագանքարան, երկար վզիկ, քառանկյուն գլխիկ: Թառ պատրաստելու համար նախընտրելի է թթենու փայտը: Թառն ունի 11-12 մետաղե լար՝ պողպատե (սպիտակ), պղնձե (դեղին), բրոնզե (կարմիր): Նվագարանի մեծ հնչյունածավալի ներքևի հատվածը հնչում է փափուկ, թավշե երանգով, իսկ վերևի հատվածը հնչեղ է ու վառ: Թառը հայերի երաժշտական կենցաղում առավելապես մենակատարային նվագարան է:

Կատարման ժամանակ թառը հենում են կրծքին, պահում հորիզոնական դիրքով: Հնչեցնում են հպանի կամ հարիչի (մզրապ, կնտնտոց, մեդիատոր) օգնությամբ, աջ ձեռքի դաստակի բազմաձև շարժումներով: